

*ՀՀ Արմավիրի մարզպետ*

*Համբարձում Մաթևոսյանին*

## Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

ՀՀ սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Թափառող քանի՞ շուն կա մարզում:
2. *Մարզում թափառող շների համար հատուկ նախատեսված քանի՞ վայր, կենտրոն կա կամ, առհասարակ, նման վայրեր կան:*
3. *2018-2020 թթ. ընթացքում որքա՞ն գումար է ծախսվել թափառող շների վնասագերծման կամ գլխաքանակի աճը վերահսկելու նպատակով:*
4. *Ի՞նչ մեթոդներով է իրականացվել և իրականացվում շների վնասագերծումը կամ գլխաքանակի աճի վերահսկումը (ստերջացում, ոչնչացում, պատվաստում):*
5. *Քանի՞ շուն է ստերջացվել 2018, 2019, 2020 թթ. –ին: Խնդրում եմք ներկայացնել յուրաքանչյուր տարվա տվյալները առանձին:*
6. *Քանի՞ շուն է ոչնչացվել 2018, 2019, 2020 թթ. –ին: Խնդրում եմք ներկայացնել յուրաքանչյուր տարվա տվյալները առանձին:*

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ բաղաբացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն

Tert.am կայքի լրագրող Արփինե Հախվերդյան



Հեռ.՝ 093410221,

Էլ. փոստ՝ [arpinehakhverdyan94@gmail.com](mailto:arpinehakhverdyan94@gmail.com)

11.06.2020 թ.